## Ո՞ՒՐ ԵՍ...

Բախտից հալածուած,
Ճամբից մոլորուած,
Ապաբախտ եղբայր, ասա՛ ինձ, ո՞ւր ես...
Ե՛կ սիրտ սրտի տանք,
Մեր ցաւերը լանք,
Ապաբախտ եղբայր, ասա՛ ինձ, ո՞ւր ես։

Ե՛կ մէյդան անենք,
Մեր սազին խփենք՝
Որպէս աշուղը հրապարակում.
Ցաւը մեր սրտին
Ասենք աշխարհին՝
Որպէս աշուղը հրապարակում։

Կեանքըս դառնացաւ,
Թոյն-լեղի դարձաւ,
Եթէ քեզ չասեմ, սիրտըս կը պատռի.
Լցուած եմ մաղձով,
Կը կորչեմ շուտով,
Եթէ քեզ չասեմ, սիրտըս կը պատռի։

Բախտից հալածուած,
Ճամբից մոլորուած,
Ցաւակից եղբայր, ասա՛ ինձ, ո՞ւր ես.
Ե՛կ սիրտ սրտի տանք,
Մեր ցաւերը լանք,
Ո՛վ սարանդական, ասա՛ ինձ, ո՞ւր ես...

1898 թ. 29 դեկտ.
Խասաւ-Իւրտ։